ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԱՐԹԱՎԱՆ

Գինը 10 կ. Գաւառներում 12 կ. 1911, Հաբաթ, Յունվարի 8-ին. Թիֆլիս. № 2

ՆԵՐԿԱՑ
ՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ

Ա
Ա
Ա

ԲԱՑԻԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1911 Թ.

VI Տարի

ԽԱԹԱԲԱԼԱ

VI Տարի

Երգիծաբանական-սատիրական պատկերազարդ շաբաթաթերթի

ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ԱՄԵՆ ՇԱԲԱԹ ԱՆԽԱՓԱՆ

Պաշտօնական օրգան պետական, ազգային, հասարակական և օտարազգի բոլոր մեծ և փոքր, յայտնի և անյայտ, պիտանի և անպիտան, փրկիչ և գրիչ, անկեղծ և կեղծաւոր գործիչ-կորզիչների և խայտառակիչների։

Ամենայն բերք բոլոր բնատնիրների համար

«ԽԱԹԱԲԱԼԱՆ» շաբաթին ծիծաղեցնում է, շաբաթին էլ ցաւեցնում, բայց ոչ ոքի հետ ոչ բարեկամ է և ոչ թշնամի։ Խմբագրին կարելի է տեսնել, երբ քէֆերդ ուզի։

Հասցէն՝ Тифлисъ Музейный пер., Редакція „ХАТАБАЛА“.

Արտասահմանից՝ Tiflis Gaucas Redaction «Khatabala»

Խմբագիր-Հրատարակող՝ ԱՍՏ. ԵՐԻՑԵԱՆ

«ԽԱԹԱԲԱԼԱՅԻ» ԲԱԺԱՆԵԳԻՆԸ

Տարեկան	5 ր.
Կէս տարին	3 »
Երեք ամիսը	1 » 50 կ.
Ամիսը	— 50 »
Թիֆլիսում տարեկան	4 » — »

«ԽԱԹԱԲԱԼԱ»-Ի բաժանորդները կարող են ստանալ «ՍՈՒՐՀԱՆԴԱԿ» օրաթերթը պակաս վճարով, երկուսին միասին փոխանակ՝

Տարեկան	12 ր.
Կէս տարին	6 ր.
Երեք ամիսը	3 ր. 50 կ.
Մէկ ամիսը	1 ր. 20 կ.

100 տարով բաժանորդագրել ցանկացողին 75% զեղչ

Ձրի կարդացողներին պէտք է նկարենք գլխիվայր։

ՆԱԻԲ-ՏԵՐԻՐՑ ՈՒ ՋՆՕԽՆԷՔԻ ՄԻՋԻՑՈՎ

Ինչ՝ Գասպար աղա Կալատուզով, էս աշխարքի բաներու, պոլիտիկուրի գործքերու, հաուց ասկի գուրձիչ-փորձիչներու, միր զազէթ-մազէթներու, միր տէրտէր-վարթապիտներու, միր առուտրական չարչիներու, միր պրիկաշչիկ-շկաֆչիկներու, միր ուշիտել-մուշիտելներու, միր տիրացու-ցոցիալներու և այլ և այլ և այլներու վրայ խիստ շատ իմ արմացի, իս ու իմ գլխատ հոքին գիգենայ։

Տօ՝ տարին տասներկու ամիս հայիրս՝ զրանք գլիփ միանայ մէ խիլքի ինք։

Տօ, տարին տասներեկու ամիս ով է դարդ քաշում,—տարինիրով. — վունց վուր ամիսներով ու օրերով մարթս ըլի՝ էնենց ինք, վունց խիլքիրնիս ինք փոխում, վունց մէլքիրնիս։

Ով գիդի դուք էլ գիդում իք թէ ինքս մէ խիլքի կոլոփ իմ. չհատաք, ամենամինձ ախմախ-ափրակ ջէր իս իմ, իժում դուք...

Էգիպուսէլ Մարքարը իր առաչնուրթուղում գրում է՝ հայք կօսէ, Սպանդարի հանդի անթառամ ին (բեխերի համա չի խօսքը), Քալանթարի պէս անհամ, Ամբարցումի թայիր չառալանդ անկարում, Օհանէս Թումանովի հանդի անխիլք, ու՝ շարում՝ վունց վուր Ղազարէ Աղայովը, կօսէ։

Միր Աստու օխնած հաուց ասկն էլ իս մէնակ ասկ չէ, կօսէ, ասկերու խառնուրթից շինած շիլափլաւ է, կօսէ, ու մէջը էնդամ «զաղ»-«մաղ» խառնած, վուր արմանքի բան է թէ վունց ինք կանում, կօսէ, էլի մէտի դիմանալ...

Ասկի չինք դիմում, հիմի ինչ վուր լաւ հայիր կան, ան փախչում ին, վուրը Ռուսէթ, վուրը Մանչուր, վուրը Էգիպտուս, վուրը Հընդստան, վուրը Էւրոպ, վուրը Ամերիկ, վուրը Օքրոդանայ ու վուրն էլ Չհանդամ։

Էս ինչեմէն է. միզէզը, միզէզը ինչ է, կօսէ, ասում է, միր Ատրպիտ արքէպիսկուպոզը իր վերչաթոդում։

Միզէզն էլ վուր չգիդինք, էլ ինչ հայիր իք։

Հայն վուր մի տեղ ճնայ՝ կու հոտի իրան-իրան, կօսէ։

Էտ կի չէ ու մէ բան էլ ասիմ. Էչմիաձնում, Էրևնումը հաղուղը, էն գիփ լաւ ու անտիկա խաղուղը, զրանքան վուր միզ ժօտ մէ աբասի ածի, նրա վրէն իմ ասում—հուտում է այ. հեսատի փիս հուտ ունէ, կօսիս ասկային փուզ ուտող գուրձիչ է, սրա միզէզը՝ պոլիտիկուրի պիտի ըլի։

Միր լաւ լաւ մարթիքն էլ, էն վուր ասկի համա գլուխը յիդ դրած ունին, ու բան վուր տեհնումին, էն չախնէթ «ՉԻԲՈ» ին անում. սրա լաւ ասկասէր փիլիսոփոզներու վրէն է իմ խուսքը — սրանք էլ էտէնց ին այ. էդ Էրևնու լաւ խաղոզի թայիր, ու բան է... վուր մէքիչ ճնում ին... հուտում ին։

Աշխարքիս վրէն սթամորթին թայիր թայիր խասիաթ ունէ, մէ տիզ կայ էտէնց է, մէ տիզ էլ դայ՝ էնենց է։

Լուսահոքի Վարանցովի ժուզը, հէյ գիդի հա ժամանակ. քաղաքը խօ էսպէս չէր մինձացած, վուր վունց պոչը կանաս գթնի ու վունց գլուխքը տեհնի, չունքի Նաթլուխէմէն մինչկի Ծղնէթ ու Դիզում է հասի՝ բան՝ էսէնց չէր, Օրթաճալումը քէֆը էրկու շահի ածէր. ինչքան գուզէիր կուտէիր, հիմի գասինէքում մէնակ թէփշիք ին բերում, չրխչրխացնում ին, չրխչրխացնում, ու իրինք-իրենց էլի դատարկ թէփշիքը տուն ու դուս տանում։

Վիրչն էլ չոտ ին համեցէք անում։

Մա՛շ։

Նուր-Տարին, Ջնուխնէքը էսէնց էլ՞նք անցկացնում։

Վիս էկադրէբա - աբա ինչ լայիզ է։

Ա՜յ միր Սունդուկովենց Գաբրիէլը էդ ժուզը, իս վուր ասում իմ, պատիկ կուլէր, լաւ միտրկուլի, հեսատ զոչաղն էր, հեսատի չասպանդ, վուր քու հաւնածը. հա, էն էի ասում՝ Նուր-Տարին, Ջնուխնէքը, Ջնուխնէքը. ամէն մէ օջախ վուր չունենար, վուր ունենար քանի ինդաւուր կունենար. հիմի, հիմի ինդաւուրը՝ խալիսը ինքն է դառի. իրար միս ին ուտում, ու էդու դասիրն էլ Օհանէս Թումանովից ու Աչի Ամբարցումիցն ին սովրում. ինչի ախպէր, ինչ ունիք բաժնելու, Քոի էս կուռը մէկիդ ըլի, էն մէկէլ կուռն էլ մէկէլիդ. սրանից լաւ բան։

Ձիզ փեշքիշ։

Էչմիաձնումը, կօսէ, էսէնց էլաւ ու էսէնց կօսէ, իս կօսէ, առաչինը է է է... ասի, կօսէ։

Բոբչիսկու ու Դոբչիսկու հանդի... վայ իմ հոքուն։

Տօ ասկասիրնէր, էն չիք ասում, վուր Էչմիաձինը պլոկուել է, հեսատի, հեսատի՝ վունց վուր Օսմանլի հողից փախած գաղթականնիր վուր կէլին մէ ժուզ, ու սրա համա կի սուբ իք արի... չիք ամանչում, չիք տեհնում։

Վայ խիլք—ինչ լաւ բան իս. հա էն էի ասում, մարթս վուր տարին տասներկու ամիս մէ թաւուր խիլք ունենայ, լա՞ւ է։

Ձիմ աւասում։

Աբա թէկի միր էրգիրը, տարին

տասներկու տմիս խասիաթը փոխում է—էս ինչի է անում. չունքի ադաթ է, բաս, լաւ, կուլի՞ վուր մէ թայիր ձմիս ըլի, ան մէ թայիր ամառ։

Էտունք իմ ասում է...

Մէ Մարքար կայ, հեստի լաւ տղայ է, հեստի լաւ օքմին, վուր կօսիս՝ վարդաղով քսած ըլի, «Հորիկնում» էլ խանդիսխան գրում է գովքիր—մագրամ ինչ կօնիս, վուր կաթնատուն գնալիս խան մածուն է ուտում, խան՝ չայ է խմում, խան՝ կաթնով փլաւն է ուզում, խան՝ սեռ։

Սեռ ու սէր։

Աբա ինչ է սէր։

Մէ տիղ վուր մածուն ըլի սեռ էլ կուլի, մէ տիղ վուր սէր ըլի մածուն էլ կուլի։

Էսաի ինչ հարգաւորութին կայ «քիմիկուզներու»։

Միր Լևոնով Գարեգինը առանց քիմիկուզներու էլ գիդա ՁԷ սէրը վուրն է, մածունը վուրը. ինչի, դուք չիք գիդա, գանայ էդ թաւուր էլ անհասկացողնիր ի՞ք։

Հէյ գիդի հա ժամանակ։

Սէրը էն է, վուր մարթ գլխեմէն ուտում է, ու թէկի շատ կերաւ սիրտը կու փղծէ, սրտի վրէն պարկում է ու բողզում մէ ինչ վուր բան գալիս է. խանդիսխան գլուխն էլ պտուտ է գալի կաչայի հանգի։

Վունց վուր մէ սիրուն աղջիկ սիրիս, սիրիս, սիրիս, վունց վուր ինչ ասիմ, ինչ կու սիրիք, խօսքի գէլիշ սխտորով խաշ. լաւ է չէ՞, բաս հայ մարթը վունց կանա առանց խաշի ապրի,—էնինց էլ մարթս առանց սիրուն աղջկայ... սէրի։

Է՛, լաւ։

Խաշը վուր շատ ուտիս, կու վնասէ, չէ՞, կու վնասէ բաս, կու վնասէ, փուրդ կու տրաքի, դվորնիկ-գորոդովին էլ մահանայ կու մոգոնին էնչախնէթ գուբան, տնաշէն հեստի պրատակոլ կու շինիլ տան վրէդ, վուր ձմեռը կօշոր գնալ ժառերիս. էնէնց էլ աղջկայ սէրը, էսաի պոլիտիկուրի բանիր էլ կայ—հեստի բանիր կու մոգոնի, հեստի սրտիդ վրէն արլանձայ կուլի, վուր քու հաւնածը, տաս տարի ուզենաս խելքի վրէն նուր մէկանց կանգնի, չիս կանայ արքայութենի ճամփան գինի։

Ոտով գլխով կորած իս։

Ձիր գուրձքիրը ու քաղքի ուպրաւի գուրձքիրը մէ թաւուր աջափանդալ կուլին։

Քաղքի ուպրաւում էսէնց է. ով չի կանում սէրի վրէն փիքր անի, ով չի կանում սէրի դադրը հասկանայ—պտի մտնէ գորոդսկոյ ուպրաւում, էսաի սէրը՝ հեստի սէր է շանց տալի, հեստի ուճուլ բուճուլ բանիր է անում, հեստի խիլքը գլխեմէն ու գլուխն էլ խիլքեմէն հանում է, վուր ամմորթին դիրթամալա է կաղնում։

Էս սնաթիս գորոդսկոյ ուպրաւի հանգի սէրի մէյդան էլ ուրիշ տիղ չի գինուի։

Ապրանքը խիստ էժան է, սիրահարւածնիրը էլի ին սիրահարւում։

Դասպար Կարապետով
Խարբերդ

ՆՈՐ ԹԻ ՀԻՆ

Եկաւ Նոր տարին.
Կրկորշի կրկին,
Իդէալն ու բարին...
Ողջոյն Նոր շարին.
Նա, որ մեզ տեց
Ոսկու անբուն ցեց,
Շքեղ մեծ տներ,
Փայլուն կօճակներ,
Եւ ճարպ, կնոջ սէր։

Թէեւ կան մարդիկ,
Որ մեզ ատում են
Եւ բամբասում են,
Բայց սխալում են։

Նրանք ասում են
Եւ հաստատում են,
Որ կան եւ մարդիկ—
Այնքան երջանիկ,
Որոնք օրն ի բուն
Աղօթք են կարդում,
Եւ միշտ ծոմ պահում,
Բայց ի՞նչ, լոկ խօսքով,
Կեղծ քարոզներով
Դրանք չեն կարող
Մեզ խաբել, փոխել,
Բարի դարձնել,
Աղքատացնել։

Օ՜, ջերմ, ջերմ սիրեք...
Նոյն իսկ աղօթել
Եւ բարիք գործել—
Այդ մենք էլ գիտենք,
Եւ շատ էլ գո՛ ենք։

Օրինակ, երբ որ
Գալիս են տոներ,
Մենք ուղարկում ենք
Մի քանի կոպէկ,
Կամ իրեր անպէտք
Հայ խմբագրատուն,
Եւ ահա իսկոյն
Նոյ-Նահապետի
Օրից սկսած,
Մեր պապ ու տատի
Ողջ ազգ ու տակի

Սեւ անունները
Գազէթ են գրում,
Խիստ փառաբանում
Ովսաննա-երգում։

Եկաւ Նոր տարին,
Ողջոյն նոր շարին,
Թող կրկի կրկին
Իդեալն ու բարին։

Բարս։



ՊՈԿԱՆ ՏԵՐԵՐԻՆԵՐ

(Գողացած էջեր)

—

1. Հնարագէտ դուստրը

Մի բուրժուայ ընտանիքի՝ միակ 12 տարեկան դուստրը չափազանց նեղացել էր իր ծնողներից այն պարզ պատճառով, որ նրանք «ալբոմի փող» շատ քիչ էին տալիս իրան։

Օրիորդիկը վճռեց ինքն իրեն օգնել։ Նա իր հայրիկին գրում է կարմրագոյն թղթի վրայ մի սիրահարական նամակ,—իր ձեռագիրը փոխելով, ի հարկէ,—և ժամադիր է լինում...

Հայրը գնում է նշանակած տեղը և չափազանց զարմանում՝ իր առաջը իր իսկ դստերը տեսնելով։

—Հայրիկ,—ասում է նրան դուստրը խորամանկ ժպիտով.—եթէ դու ինձ իսկոյն 5 բուբլի չես տալ, ես մայրիկին ամեն ինչ կը պատմեմ։

«Աֆերիմ, աղջիկ»,—կասէր ուստա Ահարոնը, իր մի «լաւ» բարեկամի տղջկանը յիշելով։

—

Ընտանիքի հայրը

—Ա՜խ, իմ անգին բարեկամ, զաւակներիս պատճառով որքան հոգս ու ջանք։

—Ի՞նչ է պատահել։

—Էլ ինչ պիտի պատահի. մեր երեխաների համար հարկաւոր էր ֆրանսուհի... կինս լաստրի մէջ տպած մի յայտարարութեան հիման վրայ՝ մի ինչ որ ֆրանսուհու հասցէն տալով՝ ինձ ուղարկում է նրա մօտ... Բանից դուրս է գալիս, որ փնդրեալը մի ջահիլ, սիրունիկ, անուշիկ ու խիստ վառնդաւոր «ուհի» է...

—Եւ դուք էլ այդ իսկ պատճառով, նրան, ի հարկէ, դաստիարակչուհի չէիք վարձել ձեր երեխաների համար։

—Խօսք չկայ։ Բայց ես այնուհետեւ ինքս սկսեցի նրա մօտ առանձնապէս՝ ֆրանսիական հիւսքանչ լեզուն ուսումնասիրել։ Եւ դա ինձ չափազանց թանգ է նստում։ Ա՜խ, այս երեխաները, որքան հոգս, որքան ծախք...

—

3. «Գիր»

Փոքրիկ Աննան լալով վազում է իր մօր մօտ։

ԵՐԿՈՒ ՀԱԿԱՌԱԿՈՐԴՆԵՐ



Կոստանդին Խատիսեան.—Ես ասում եմ, որ կաթողիկոսների կամքը մեզ համար սուրբ պիտի լինի. եթէ նրանք ասեն՝ մածունը սև է, մենք էլ պիտ ասենք՝ սև է, եթէ ասեն դեղին է,—պէտք է ասենք՝ դեղին է... և այսպէս անվերջ։

ეროვნული ბიბლიოთეკა

—Մայրիկ, մեր Սոֆիա դայակին անպատճառ դուրս արա,—խնդրում է նա։

—Ինչու՞ համար աղջիկս։

—Նա շատ չար է, ամենքին խփում է, նույն իսկ հայրիկին...

—Հայրիկո՞ն. ինչպէս թէ...

—Գիտե՞ս ինչ էր. հայրիկս ածիլւում էր... նա ուրախ էր և Սոֆիայի հետ հանաք էր անում.. Հէնց որ հայրիկս կզցաւ յատակից սապնի կտորը վերցնելու՝ Սոֆին իր ամբողջ ուժով փամփեց հայրիկիս ու ասաց. «Ա՛յ քեզ, հիմա քիթի՞ նեղ»։

4. Փաստաբանի մօտ

Մի երիտասարդ տիկին.—Ես ցանկանում եմ ամուսնուցս բաժանուել... Դրա համար ինձ հարկաւոր է հիմնաւոր պատճառ ունենալ։

Փաստաբանը.—Շատ բարի, տիկին... իմ ջանքը օգնականին ձեզ մօտ կուղարկեմ։

5. Խորհուրդ

Երդուեալ-հաստատարմատար. — Անկեղծ խորհուրդս է՝ թողնէք այդ գործը... Գիտէք ինչ. եթէ որևէ մէկին ինձ սրիկայ, գող կամ աւազակ անուանէ,— ես չեմ հակառակիլ, ոչ կըբարկանամ ու ոչ էլ կընեղանամ...

Խորհրդի դիմողը.—Ձեր բանն ուրիշ է։ Իսկ ես չեմ կարող տանել,—ես ազնիւ մարդ եմ։

Համայնացրեց՝ Եզոպ Ծայրահեղ վարդապետ

Վ. ԱՌԻԿ

(Նոր ընթացքի գրականութիւն)

Ձեռքս ընկաւ սինդեմիկօնը...
Ինչ անել նրա հետ...
Քսեցի սինդեմիկօնը աթոռի վրայ, հանեցի հագուստս և նստեցի...
Նոր զգացմունք...
Բոլորովին չզգացած զգացմունք...
Դեռ չկայ անմուած գրականութեան մէջ...
... Սինդեմիկօնը սկսեց չորանալ և անհանգիստ կերպով սեղմում էր կաշիս։
Քանդեցի բարձը և նստեցի սղոտմազի մէջ...
Կրկին մի նոր զգացմունք...
Զարմալի է...
Նստած էի բաւականաչափ...
Մտածում էի մի նոր վէպի ստեղծագործութեան մասին...
Այս ինչ է...
Զգում եմ, կարծես թէ յետևիցս կրկայ է կպել...
Նայում եմ հայելու մէջ...
Ես վառիկ եմ...
Ձեւից նոր դուրս եկած վառիկ...
Գանգուր պոչիկով...
Հա, հա, հա...
Ես վառիկ եմ...
Կուչ եկած մօտեցայ սեղանին, հաւաքեցի հացահատիկները, և փորձեցի կոցահարել...
Հացահատիկները կպչում էին քթիս, մասամբ էլ բերանս էին մտնում...
Ուրախ էի...
Մտաւ խոհարարուհին...
Երեսի ինձ համար է եկել... չէ՞ որ վառիկներին խորովում են... ես մտայ թագնուելու մահճակալի տակ...
Սարսափում եմ...
Արդեօք չփորձե՞լ թէ ինչպէս է հարկաւոր տապակուել իւղի մէջ...
Այս հարցն էլ չի եղած նոր գրականութեան մէջ...
Մտածում էի և մաքրում էի քիթս տաներով...

Լրես № 30-ից.

ԽՈՀԻԼ ԳԻՇԵՐՈՒՄ

Նուէր օր. Լիզա Մ.-Ֆ-ին.

Ու... ու... ուժգին թաւմով քամին փչեց...
Խաւար գիշերում,
Մի անբնակ վայրում
Ծանր բեռի տակ մենորդը հառաչեց։

Կեանքի դուռը դեռ նոր էր բացուած,
Որ խեղճը անցաց,
Վիշտը շաղակած՝
Թողեց աշխարհը—կեղծիքով լցուած։

...Ու ինքը վիրաւոր, սիրտը խոցուած,
Սեւ խաւար վայրում,
Լուռ անապատում՝
Առանց յոգնելու ընթացք է բռնած...

Քամու բերանով խաւարն է վայում,
Ձորերում թնդում,
Ժայռերին զարնւում.
Վանատակած մենորդի սիրտը մաղլում։

Արդեո՞ք շուտ կանցնի խաւարն այս ահեղ,
Կամ երբ կփայլի մ'ի շող
Այս սեւ մթում սիրտ մաղող
Եւ կրղաղրի բանու վայումը խեղայեղ...

Ու տատասկոտ իր ճամբով՝ անվրդով
Նորից այժ առած,
Իր ուղին բռնած
Նա գնում է յառաջ յուսալից սրտով։

Ցակ. Ցերուցի

ԲԱՑ ԸՆԾԱՑ ԲԱՇԿԱՊԵՏ
Վ. ՄԱԾՐԱՒՆՈՒՆ
ՏՈՆԵՐԻ ՌՈՒԹԻՒ

Մի՛ խմիր, մի՛ ծխիր
Մի՛ ուտիր, մի՛ քնիր
Մարմնամարզութիւն չգիտես,
Դէսից-դէնից մի՛ գլիր։

Սերուցեան

ԳԻՒՂԱՏՆՏԵՍՆԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿԸ

(Իմ պատմածները)

Անցեալ օրը մի անդամ անակնկալ կերպով ես ընկայ մի խումբ գիւղատնտեսների մէջ։ Բոլորն էլ նրանք մարդիկ էին, բայց գիւղատնտեսներ և՛ ակնոցաւոր, և՛ առանց ակնոցի։ Խօսում էին, ինչպէս առհասարակ ամէն մարդ է խօսում. և դատում էին, ինչպէս ամէն մի մարդ է դատում։ Կային և՛ ծերեր, և՛ ջահիլներ. բայց բոլորն էլ թունդ գիւղատնտեսներ էին և՛ ակնոցաւոր և՛ առանց ակնոցի։ Լրագիրներ էին կարդում. բայց միշտ խօսում ու ճառում։

—Մուղանի շրջանը լաւ վայր է գիւղատնտեսութեան համար։

—Այո՛։ Լաւ վայր է։

—Շուշու մօտ ընդարձակ կալւածներ կայ, որոնց կարելի է շահագործել։

—Այո՛։ Կարելի է։

—Իդուր տեղը մենք խմբակցութեամբ չենք ձեռնարկում գիւղատնտեսական մի գործ, որ մեծ օգուտներ կարող էինք ունենալ։

—Այո՛, իզուր։ Մեծ շահ կունենայինք։

—Կամ գնացինք գիւղերը. այնտեղ էլ կարելի է օգտակար լինել։

—Ի հարկէ։

—Է՛հ, դուք էլ, մէջ մտաւ եփած խնձորի երեսով մի ծեր գիւղատնտես.—ասում էք ու ոչինչ չէք անում։

—Մի օր էլ կանենք, ինչ ես շտապում...

—Էլ ե՞րբ։ Դէ հէնց այժմեանից սկսեցէք էլի...

—Հիմի ձմեռ է տարբ... ինչպէս կարելի է։ Եւ բացի այդ շատ անյարմարութիւններ արգելք են լինում...

—Ի՞նչ անյարմարութիւններ։

—Ահա գլխաւոր անյարմարութիւնը որ գիւղում բաղանիք չկայ, որ կարող լինէինք մեր աշխատանքից յետոյ լողանալ... թատրոն չկայ, որ մեր հոգեկան պահանջներին գեղարուեստական հաճոյք պատճառէր... էլ որ մէկը ասում... չկայ օպերա, կլուբ, ինտելիգենցիա, թղթախաղիր և էլ ինչ ուզում էք...

—Ի հարկէ, ի հարկէ, ձայնակցեցին մի քանիսը։ Ինտելիգենտ մարդուն շատ դժուար է ապրել այդպիսի շրջանում։

—Դժուար... մինչև անդամ տաժանելի... եղբայր, դուք չէք տեսել, թէ ինչ սոսկալի զրկանքներ է կրում գիւղում ապրող ինտելիգենտը... նա զուրկ է ամէն ինչից։ Ահա տներ են գալիս, նա չունի ոչ խաւիար, ոչ լոքո, ոչ իշխան, ոչ ցոցխալ... և մինչև անդամ գողինաղի համար պողոք... դէ, հրեւակայեցէք, թէ ինչ է նրա դրութիւնը։

—Ի հարկէ վատ։

—Ոչ թէ վատ, այլ սարսափելի։

—Այո՛, այո՛...

—Այդ բոլորը դեռ ոչինչ. կարելի է համակերպուել. բայց գլխաւորն այն է, որ գիւղում չոր սենեակ չկայ, որտեղ կարո-

საქართველოს პარლამენტის ეროვნული ბიბლიოთეკა

զանաս ապրել, բոլորը մի յարկանի տներ են և մի երեք յարկանի բնակարան չես գտնի։

—Ի հարկէ, կատարեալ խոզաբներ են և ոջլոտ որջեր ուրիշ ոչինչ։

—Այստեղ յանկարծ խօսակցութիւնը ընդհատուեց, որովհետև մի հաստափոր աստիճանաւոր ներս մտաւ և երեսի մի կողմով ժպտալով ողջունեց բոլորին։ Ցետոյ նա յայտնեց.

—Պարոններ, աչքներդ լոյս... Ժամհարեանը 250 հազար բուբլի կտակել է գիւղատնտեսական դպրոց հիմնելու համար։

—Իզուր տեղ։ Իզուր։ Աւելորդ էր։

—Ինչու. զարմացաւ հաստափորը։—Ես կարծում էի դա ձեզ կուրախացնի։

—Ինչու պէտք է ուրախացնի։

—Շատ յայտնի պատճառով։

—Է՜հ, բոլորովին էլ ուրախալի չէ... Մենք աւարտել ենք, ինչ ենք շինում, որ այդ դպրոցներն աւարտողներն ինչ շինեն...

—Ի հարկէ։ Այո, ի հարկէ,—ձայնեցին նորից ակնոցաւոր և առանց ակնոց գիւղատնտեսները։—Մեզ սկի գործ չկայ, նրանց ինչ պիտի լինի...

—Զարմանում եմ... շարունակ հաստափորը։

—Շատ իզուր էք զարմանում... Մենք գտնում ենք, որ այդ գումարը իզուր տեղն է այդ նպատակին կտակած։

—Ինչու։ Կամ ինչի կտակեր, որ լաւ լինէր, ձեր կարծիքով։

—Ինչի... միթէ քիչ բան կայ, որ կարօտ է օգնութեան... Այ օրինակ մեզ, անգործ գիւղատնտեսներիս, եթէ կտակեր՝ միթէ վատ կլինէր։

—Ի հարկէ վատ չէր լինի... պարզ բան է... վերսին ձայնեցին ակնոցաւոր և առանց ակնոցի գիւղատնտեսները։—Մենք այդ ժամանակ ապահովուած կլինէինք և կկարողանայինք օգտակար լինել գիւղացիութեան...

—Իսկ հիմա միթէ չէք կարող։

—Ի հարկէ չէ։ Քանի որ անյարմարութիւններ կան։

—Բայց, յամենայն դէպս, պարոններ, դուք մի մոռանաք, որ այդ կտակը լաւ նպատակի է յատկացուած,—նորից խօսեց աստիճանաւորը։

—Ո՛չ. ընդհակառակը, բոլորովին վատ նպատակի։ Այդ դպրոցում միայն անգործներ կըպատրաստուեն, ինչպէս մենք ենք անգործ, ուրիշ ոչինչ։

Ես գործի պատճառով շուտով դուրս եկայ գիւղատնտեսների շրջանից և չիմացայ, ինչպէս վերջացաւ նրանց խօսակցութիւնը։

Ես կանչուած էի Հայոց Հրատարակչական ընկերութեան ժողովին ներկայ լինելու և գնացի։

Ֆ.

ՄԻՆԻՍՏԻՐ ՎԻՊ

Մի էակ էր մութեղէն, մանրամասն,
Դարախանի շաղ աղջիկը՝ Աճիկը.
Եւ անգին էր և անարիւ ու եամն,
Մի դափի փուլ արժէր նրա պաչիկը,
Կարագով լի՝ իւրաքանչիւր աչիկը...

Մազերը թուխ, ջանը կակուղ, սիրտը փուխ,
Զիզիլ-պիզիլ ու գարդարուն չուչիկը,
Երբ ծածկում էր իր սև ինչպէս քարածուխ
Զարմանալի ծիպծիբաւոր չեպչիկը,
Սաթայէլի հարսն էր թուում Աճիկը...

Երբ ծամում էր եքա կտոր մաստակը,
Եւ սխտորը որպէս ирисъ ու Bon-bon
Իւր գարշ շնչով հոտացնում էր ողջ բակը,
Շշմում էր խեղճ զրկից նոսթլի Զալարն,
Փքած կատաղ, գիժ Տատոն ու Տէր-Հարօն...

Բայց արի տես էս փուչ էլած Աճիկը,
Դարախանի մահից յետոյ ստացաւ
Տան կայինքը, բանկի բիլէթն ու չեկը.
Մէկէն՝ ձգեց жених-ներին փորացաւ,
Խօսակցութեան նախանձելի նիւթ դարձաւ...

Էս որ լսեց Տէր-Բզրիալ տէրտէրը,
Ի՛ տէր հանգած իւր տիրուհուն մոռացաւ,
Թռաւ մտքով հարստութեան եթերը,

ՓԵԼԻԷՏՕՆ

„606“

(Պատկեր երէկուայ, այսօրուայ եւ վաղուայ կեանքից)

Տիկին Սոֆիան, իր սովորութեան հակառակ, այսօր շատ վաղ էր վեր կացել անկողնից։

Դեռ ժամը 10-ն էր, որ արդէն հագնուել և տուալէտի ամբողջ գործողութիւնը վերջացրած՝ դահլիճում լրագրներն էր թերթում մէկը միւսի յետևից։

—Ահա, վերջապէս գտայ,—բացականչեց նա ինքնաբաւական կերպով,—վերջապէս գտայ... Այժմ ես բոլորովին կառողջանամ։—Ու սկսում է կամաց կարդալ լրագրի մէջ գտնուած մի բժշկի յայտարարութիւնը. «Բժ. Բ.-ն պատիւ ունի յայտնելու յարգելի հասարակութեան, որ այսօրուանից սիֆիլիսով հիւանդներին բժշկում է էհրլիխ-Հատայի «606»-ի սրսկումով»։

Բայց հարկաւոր է շատ զգոյշ լինել, որ չնկատեն իր՝ բժշկին արած այցելութիւնները, որովհետև իր հիւանդութեան մասին ոչ ոք իրայիններից չգիտէին։ Ուստի նա վճռեց հէնց նոյն րոպէին դիմել բժշկին, քանի դեռ չի տարածուել բժշկի յայտարարութիւնը և այցելուների թիւը քիչ կըլինի։

Մարտին Դարասիմիչը, Սոֆիայի ամուսինը, որ առաւօտեան վաղ գնացել էր խանութ, նոյն միջոցին գալիս է տուն թէյ խմելու։

—Ո՞ւր ես պատրաստուում գնալու այսպէս վաղ, Սոֆիա, դեռ ժամը հազիւ 10-ն է։

—Հա, Մարտին, ուզում եմ գնալ քրոջս մօտ, այստեղ ձանձրալի է ինձ համար մենակ։ Նատաշան ու Գրիշան էլ գնացին ըզբօսնելու՝ մինչև նրանց գալը ես կըվերադառնամ։

—Լաւ, դու գիտես։

Սոֆիան շորերը խշշացնելով դուրս է գընում։

Գասպարը (նրանց ծառան) թէյ է բերում և դնում սեղանի վրայ, լրագրների մօտ։

Մարտին Դարասիմիչը ժամանում է սեղանին թէյ խմելու, իսկոյն աչքին է ընկնում բժշկի յայտարարութիւնը։

—Օհո,—ուրախանում է նա,—«606»-ը այստեղ արդէն մուտք է գործել, շատ ուրախ եմ. հարկաւոր է գնալ անպատճառ և բժշկուել։

Բայց ուզում է այնպէս տեսնուել բժշկի հետ, որ ոչ մի ծանօթ չնկատի, որովհետև ոչ ոք չգիտէ իր հիւանդութեան մասին, նոյն իսկ իր ընտանիքի անդամները։ Ուստի շտապ-շտապ թէյը խմելուց յետոյ ըշտապում է բժիշկ Բ.-ի մօտ։

Ժամը 1-ն է։

—Տրայ լա, լա, լա, լա... երգելով վերադառնում է տուն Գրիշան, պապիրոսը ձեռին, ատամի արանքից բարակ թքելով յատակի վրայ։

—Հա, տեսնեմ լրագրում «606»-ի մասին յայտարարութիւն կայ։ Այսօր ինձ ասացին, որ արդէն ստացել է բժ. Բ.-ի մօտ։ Ասաց ինքն իրան Գրիշան և ցատկելով դէպի սեղանը վերցրեց լրագիրը կարդաց և ուրախ-ուրախ բացականչեց.—Ահա, կըգնամ, կըգնամ, հէնց հիմի կըգնամ։ Ամբողջ վեց ամիս հոգիս դուրս եկաւ։ Վերջապէս կըբժշկուեմ. բայց պէտք է զգոյշ լինել, որ ծնողներս ոչինչ չնկատեն։

Այդ միջոցին ծառան ներս է մտնում դահլիճ և հարցական հայեացքով դիմում Գրիշային։

—Աղա...

—Հը՛, ինչ ես քիթ ու մռութդ կախ գցել քաղաքային վարչութիւն ուղարկած ժանտախտոտ մկան նման.—ասում է ծաղրելով Գրիշան և պատրաստուում գնալու։

—Չէ, աղաս, հը՛ քիչմ բաքլիէ, բան ունիմ քեզի ըսելու. մէ բանմ պիտի հարցնիմ, թէ չես նեղանայ։

—Հը՛, ասա տեսնիմ, ինչ ես ուզում։

—Իսի գաղէթին մէջը գրած է «606» դեղին բանը, գուզեմ իմանալ։

—Գրած է, յետոյ ինչ ես ուզում, չլինի՞ թէ դու էլ...

—Չէ, աղա, չէ,—Աստուած չէնէ։ Մէ քեռիմ ունիմ, մէ թարաքը դամլա է ընկէ, գուզեմ տանիմ գոխտուրին քովը, կսէն թը

Իւր գեղեցիկ սիրուհուց էլ հեռացաւ
Ու Աճիկի չեղած խելքը գողացաւ...

Սակայն շուտով Կեսի-Տիտին լոյս ընկաւ
Ու պակեաց Աճիկի հետ մի գիշեր.
Եղած-չեղած գաւշնարի ջանն ընկաւ...
Ու փոխելով զգեստ գուլպէքն ու քշեր,
Հագաւ շերտ շիրլեաներ ու կալոշներ...

Համ ուտում էր, համ թակում էր Աճիկին,
Էդ քոլեցի Կեսի-Տիտին անասուած,
Համ ծաղրում էր, նահատակում խղճուկին,
Համ «Արաքս»-ում պահում կօխտայ ոսի քած.
Բարաջիկի զայֆախանից մի քիչ ցած:

Եւ երբ կերաւ մինչև կոպէկը վերջին,
Շաշ Աճիկին դէպի ջրերը ճանրեց.
Ապա ծախեց խալի, կարպետ ու ջեջիմ,
Եօրդան, գօշակ, քափքոթան ու խեց ու մեց...
Դունչը սրբեց, գլուխն առաւ ծրպպեց:

. . . . . .

Հիմա, արդէն ոնում է մի նկուղում
Փորը քաղցած, ճերքը ընկած Աճիկը,
Գոռգոռում է անճար, անջան ու գողում...
Գոռում է և дворник Մուխսի Խաչիկը—
«Եա չի՞ մեռնի էս սատանի աղջիկը՞...

Մարիկ

ԽՐԱՏ ՀԱՅՈՐԴՈՒՆ

Եղիր կամիս գող, աւազակ, սրիկայ,
Բայց մի լինիր դու տմարդի, անզգայ:

—

Ձնախանձես պատւի, ոսկու դու անչափ.
Ունեցողն է հատած փառքին հիասթափ:

—

Հզօրի սէրն որքան ուզես վայելիր,
Ձեռքիդ լինի արդարութեան լոկ կշիռ:

—

Մի պատճառիլ քեզնից թոյլն դու տանջանք,
Որ չանջէ յետոյ ներսդ խղճմտանք:

—

Ունեցողը երկիւղ սրտում, թոյլ ծեծի,
Ծեծողի հետ հաւասար քաջ կը հաշուի:

—

Խակ ամբոխին զուր վեհ մտքեր շռայլես
Մենակ թոզնի, կը դարձնի քեզնից իր երես:

—

Թէ չես կարող պարգեւ քո ձեռք ընկածին,
Գոնէ չլինես վատ օրինակ թուլերին:

—

Լաւ է որ դու երկու աչքով կուրանաս,
Քան քո կեանքում մի լաւութիւն ուրանաս:

—

Ստւերի տակ հանգստանաս մի ծառի,
Օրհնիր ի լոյս յիշատակը տնկողի,

—

Զորցած բունն էլ չանես ծաղրիդ առարկան,
Գոռ հեղեղէն կլինի նա քեզ յենարան:

—

Թէ շնորհքից զուրկ է լեզուդ ճառելու:
Չլինես պատճառ, քո տեղ ուրիշին կարմրելու:

Սանդրիկ Ապրէր

ՀԻՆ ԱՂ ՈՒ ՀԱՅԸ ՉՊԷՏՔ Է ՄՈՌԱՆԱ

Ցիշում եմ, թէ ինչպէս Թաղանցի Սեմա-պալ քաղաքում գտնուած երկու աստղագէտ եղբայրներ սրանից մի քանի տարի առաջ գուշակեցին, որ աշխարհս կործանելու է ճիշտ այնպէս, ինչպէս որ կործանուել է Աբդուլ Համիդի գլուխը:

Եւ այդ բանի համար էլ Գասպար Կալատուզովը անագին ծախսեր է անում և ուստայ Գիգոլին մի մեծ տապան է շինել տալիս:

Ցիշում եմ նոյնպէս, որ սրանից մի քանի շաբաթ առաջ էլ «Խաթաբալան» գուշակեց, որ յունուարի 1-ին Նոր-Տարի է լինելու:

Աստղագէտների գուշակութեամբ աշխարհս էր կործանուելու, իսկ «Խաթաբալայի» գուշակութեամբ՝ մարդկանց գրպանները: Մէկը միւսից բեթար է. ես գիտեմ, որ նորափեսայ մարդիկ ուելի շուտ կը համաձայնուէին առաջինին, քան թէ երկրորդին, իսկ նորահարսները՝ ընդհակառակը:

Ամենքին էլ պարզ յայտնի է, որ աստղագէտ եղբայրների գուշակութիւնը կատարուեց: Բայց թէ «Խաթաբալայի» գուշակութիւնն էլ իրականացաւ թէ ոչ, դա ինձ յայտնի չի, միայն թէ անցեալ շաբաթուայ «Խաթաբալայի» մէջ նկարուած տեսայ Գասպար Կալատուզովին իր գերդաստանով և Նոր-Տարուայ աքացիներից ցած գլորուող ծե-

---

աղ 606-ը օր քսան, լաւնա կը:

—Հա՛, երբ որ այդպէս է կասեմ: X փողոց տ. № 25. բժիշկ Բ.-եանի մօտ, հասկացա՞ր: Բայց այսօր չտանես, վաղը տար:

—Շատ լաւ, աղա, էքսան տանիմ կը: Ու դուրս է գնում, նրա յետևից էլ Գրիշան:

Բայց Նատաշան արդէն Ժողովարանում լսած խաղալու ժամանակ էր լսել «606»-ի մասին: Տուն եկաւ, տեսաւ, որ ոչ ոք չկայ, յարմար առիթ համարելով, ձեռքի փոքրիկ փաթեթը սեղանի վրայ շպրտեց և շտապով դուրս գնաց փողոց:

—

Նախորդ երեկոյ արդէն հասարակութիւնը կարդացել էին լրագրներում՝ բժ. Բ.-եանցի յայտարարութիւնը և առանց ժամանակ կորցնելու առաւօտ վաղ-վաղ թափել էին բժշկի տունը:

Այդ ժամանակ միայն տիկ. Սոֆիան ըզգաց իր սխալած լինելը, բայց արդէն ուշ էր, չէր կարող յետ դառնալ, որովհետև հէնց նախասենեակ մտնելուն պէս բժշկի ծառան գիմաւորեց նրան ցուցակագրելու մտահանում:

—Իմ ազգանունս Շաւսախեան է, ասաց ծառայի հարցին պատասխանելով տիկինը և նոյն ծառայի ուղեկցութեամբ մըտաւ մի առանձին սենեակ, որտեղ պէտք է սպասէ իր հերթին:

Հիւանդները անդադար ներս ու դուրս էին անում, իսկ ծառան ամենայն հմտութեամբ գրում էր նրանց, հարցնում էր սրանց անուն-ազգանունը գրում, կանչում և ուղարկում դահլիճ:

—Բժ. Բ.-եանցը այստեղ է բնակւում, ընդունում է հիւանդներին,—ասաց նախասենեակ մտնելով Մարտին Գարասիմիչը խապտ ձայնով՝ իրեն դիմաւորող ծառային:

—Այո, պարոն, համեցէք: Խնդրեմ ասացէք ձեր ազգանունը:

—Այդ ձեր ինչի՞ն է հարկաւոր:

—Պէտք է ցուցակագրեմ:

—Հա՛... լաւ, դրիր, իմ ազգանունը Շաւսախեան է: Բայց խնդրեմ ինձ մի առանձին սենեակ տանէք, որովհետև չեմ ուզում երկաւ դահլիճում:

—Համեցէք: Ու տանում է մի ուրիշ սենեակ:

Դրանից յետոյ գալիս է Գրիշան, իր ազգանունը—Շաւսախեան—գրել տալուց յետոյ, մտնում է մի ուրիշ սենեակ:

Վերջը նոյն ձևով իր ազգանունը գրել է տալիս և մտնում է առանձնասենեակ Նատաշան:

Հազիւ մի քանի րոպէ անց՝ մտնում է Գասպարը դահլիճ և վախվխելով աջ ու ձախ դիտելուց յետոյ՝ նստում աթոռի վրայ:

Ծառան մօտենում է նրան:

—Ազգանունդ ի՞նչ է:

—Հայ լուսաւորչական:

—Այդ չեմ հարցնում, քո ազգանունդ եմ հարցնում:

—Անունս Գասպար, հրամանքիդ ծառայ:

—Իսկ ազգանունդ... անունդ ինձ հարկաւոր չէ:

—Է՛... ըշաը ըսինք... հայ եմ... հարս ա փաչաճի էր, լաղապս ա Փաչաճեանց է, հիմի հասկացար... ինչ բէտուզուրն է:

Դահլիճը լիքն է հիւանդներով. որի քիթն է կապած, որի ծնօտը, որի վիզը, որի գլուխը, որի ականջը, որի թևը փաթաթած փալասներով, ամենքն էլ սրտատրոփ սպասում են իրենց հերթին:

Ծառան ներս է մտնում դահլիճ և մոռանալով, որ Շաւսախեանները գաղտնի են եկել ու մտել առանձին սենեակներ. բոլոր ոյժով գոռում է.

—«Շաւսախեան, հերթը ձերն է»:

Այդ միջոցին առանձին-առանձին սենեակներից դուրս են գալիս տիկ. Սոֆիան, Մարտինը, Գրիշան և Նատաշան ու բոլորն էլ իրար հանդիպելով ամօթից ուշաթափւում են, Գասպարը թողնում ու փախչում է դահլիճից:

Մարտին Գարասիմիչը ուշքի գալով ու տեսնելով, որ իրենց տանը ոչ ոք չի մնացել առողջ, բացի մ'ոպսիկ շնից, որը միայն վերջ է մնացել այդ հիւանդութիւնից, բժշկին հրաւիրում է իրենց տուն իր «606» դեղով բժշկելու իրենց ամբողջ ընտանիքը և ծառային:

Միսս չի

բուկ հին տարուն։

Ասած է. «Նոր հաւերին ջո՛ւ... ջո՛ւ... ջո՛ւ... հին հաւերին քշ՛... քշ՛... քշ՛»։ Ամեն բան էլ էդպէս է։

Փեսան քանի նոր է, ձուաձեղ էք ուտացնում և մութաքան առաջ բերելով քիչ է մնում, որ սեղանի վրայ նստացնէք, մի քիչ հինացաւ թէ չէ, դանսոտը կորցրած վէքսիլի նման, ղրաղ էք դնում և մութաքի տեղը չուլ, ձուաձեղի տեղ դարդակ իւղ է։ Չէք տալիս, որ գոնէ բեխերն ալամաթի ու հօրանց տուն պարզ երես գնայ։

Նոր գործ կըսկսէք, սիրով կընդունէք, մի քիչ որ անցնի՝ ջուր տուր ու քշի։ Նոր մարդ կըհրաւիրէք պաշտօնի, գրկաբաց կընդունէք, մի քիչ հնացաւ, թէև մարդը նոյնն է, բայց դուք, ոսի տասծի պէս, հայդէ պոշոլ կանէք և կտրիպէք, որ ըսրիկ ոտքով մի շնչումը Երուսաղէմ հասնի։

Նոր-տարին կըգայ, քաղցր գոգինաղով ու մուրաբով կընդունէք. մի քիչ հնացաւ էրուած բաղիրուղի էլ չէք տալ և աքացի տալով, ապառաժից ցած կըգլորէք։

Հին աղ ու հացը երբէք չպէտք է ժոռացուի, թէ չէ ով որ ժոռանայ երեք աչքով կուրանայ։

Մի՞թէ հին տարւայ շնորքը չէր, որ ըսրիկի կոնան մի շայով և կարմիր գինու թունդին տասներկու շայով էր ծախւում, իսկ նաղշքար Արտաշն էլ երկու մանէթանոց վիվէսկան Արսէնի սչեստումը մի մանէթով էր նկարում։

Մի՞թէ հին-տարւայ շնորքը չէր, որ Էջմիածնի գործերը կանոնաւորուեցին և սեպլուխներն էլ աչքերը խուփ երդուեցին այս սուհետև գոնէ քնած ժամանակ իրանց կոչման բարձրութեան վրայ կանգնած լինել։

Մի՞թէ հին-տարւայ շնորքը չէր, որ իր մանուն բոպէներում հայ լրագիրները լցրեց մեր գրականագէտների տուր ու դըմբոցով։

Մի՞թէ հին-տարւայ շնորքը չէր, որ գաբացկոյ ուպրաւան օսլայած շապիքաւորների, ճարտար լեզու ունոցողների կամ խնամիների ամեն մի տեսակ գործերը մի քանի օրում որոշում էր, իսկ մի խեղճ մարդու, հողային գործի համար, ամբողջ 15 տարի է չարչարում է և խոստացել է դեռ էլի չարչարել ու տանջել։

Այդպիսի միթէներ շատ կան, որոնք գալիս են ապացուցանելու թէ հին աղ ու հացը չպէտք է մոռանալ։

Փարեմուզ

ՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԵՐԵԿՈՅԹԻ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Դեկտեմբերի ճիշտ 29-ին,
Բայց երեկոյեան անորոշ ժամին,
Հայ վարժապետները մի հանդէս ուին
Եւ զարմացրին։

Հիմա ձեզ պատմեմ—ինչպէս սկսեց,
Ինչեր կատարուեց. հայ վարժապետը
Ինչ դէմք ցոյց տուեց—ուրախացրեց։
Ես նախ սկսեմ գեղեցիկ սեռից
Եւ պարոններից, կամ թէ հիւրերից։

Նրանք շատ էին. մօտ երկու դիւժին,—
Օրիորդ, ամուսին։
Նրանցից ոմանք ճիշտ երեք տոմսակ
Էին վերցրած,
Հէնց այդ պատճառով—սուրբ նպատակով
Ողջ չգիտէին որտեղ նստէին,
Ու խիտ-խիտ կպած, գրկած, կարմրած,
Ամբողջ ժամանակ, երկու պատի տակ,
Մնացին կանգնած։

Իսկ երեկոյթի—նիւթը անհոգի՝
Այնքան երկար էր և հետաքրքիր,
Որ կէս հիւրերը թողած տեղերը,
Թուղթ էին խաղում, կամ սիրարանում։

Հանդէսի վարդը բժշկի հաւն էր,
Որ. մի աքլորի կանչեց, կչկչաց,
Եւ ինքն իրենից—աքլորի սէրից
Եւ ողջ հիւրերից ոստոիկ գոհ մնաց։

Երկրորդը մենակ մի սև տղաւ էր,
Որն ռուսերէն այնպէս կուտեց,
Որ լոյս գահլիճը խաւարեց, մթնեց։
Իմ կողքին—մի կին, տղաւի ձայնից
Ասոտիկ վախեցած,
Երեսը շրջեց ու այսպէս խօսեց.
—«Աստուած խէրն անի, զուտ հայի հանդէս
Եւ կրկին տղաւ... այ դու աներես,
Մինչև երբ այդպէս մեզ վախեցնես,
Եւ մեզ... այս օրում...
Շուտով Նոր տարուն...
Բայց ով է լսում։

Յետոյ երևաց տիկին Մայսուրեան,
Սա էլ սկսեց մեծ պուսայ նման՝
Այնքան ոտաւոր, անոտ դուրս տուաւ,
Ախ այնքան փքուեց, թթուեց, կարմրեց,
Մինչև որ հոպիւ соловѣй դարձաւ...
Թռաւ, հեռացաւ։

Զորրորդ՝—երգեցին, մեռան, պարեցին,
Լաւ նուագեցին և լաւ լացեցին։
Վերջը հոպիւ հաղ, շատ գոհ, բայց նուաղ
Ընդհանուր ոյժով դուռը բացեցին
Ու դուրս վազեցինք
Եւ ազատեցինք։

Բայց ինձ խնդրեցին ողջին պատմել
Այդ երեկոյթի մասին չխօսել
Եւ ոչ էլ գրել,
Ը... որովհետև նրա արդիւնքը
Խիստ «կարևոր էր»։
Թէև առանձին եկած բան չէր...

Գարե.

ՄԵՆՔ ԳԻՏԵՆՔ...*)

—Մենք գիտենք լաստ-ուղեղ ուսուցչացնել։

—Մենք գիտենք մեր ընկերութիւններին մեծ-մեծ անուններ տալ և նրանցով փոքր ու աննշան գործեր կատարել։

—Մենք գիտենք մեղաւորներին պաշտպանել, իսկ արդարներին «մեղաւոր» դուրս բերել ու վերջը փաշմանել։

—Մենք գիտենք այն, ինչ չպիտի գիտենանք (անմիտանութիւն) և չգիտենք այն, ինչ որ մեզ անհրաժեշտ է (պարզ է թէ ինչ)։

Մենք գիտենք... ճիշտն այն է, որ մենք ոչինչ չգիտենք և դրա համար էլ՝ դժբախտ ազգ ենք։

Դ. Ռ.

ԵՐԴՈՒՄ

Երդւում եմ կեանքով ներկայ մարդկութեան,
Որ նա է միակ զարգանն աշխարհի,
Նրա որոնած ճանապարհի փրկութեան
Բոցը գեհենի, հուրը դժոխքի։

Նա ինքը նիւթում, շարիք ու տանջանք
Պէս-պէս ժաքերով իրեն կարկանդում,
Ուզում՝ ամրել խեղճի հառաչանք,
Սակայն նոյն խեղճի տունն ինքը քանդում։

Սէր է քարոզում, իրքն էլ անարգում
Մէկին օգնելով՝ խեղդում հազարին,
Բարեգործութեան նա միշտ խնկարկում,
Բայց շահագործում՝ խեղճին ողջ տարին։

Արդարադատ է իրեն ցոյց տալիս,
Բայց խլում պատտան որբերի ձեռքից,
Ճշմարտութիւնը սիրում՝ մեռնելիս
Ու կտակներով յարգում ամենից։

Անթիւ իդէաներ անդուլ ստեղծում
Ու այդ կուռքերին ընծայում հատատ,
Բայց տեղը գալիս՝ նրանց շահագործում,
Որպէս ընկած կին—անտանակ, կատատ։

Մի ձեռքով զրում, միւսով միշտ ջնջում,
Մնարով անվերջ, արնոռշտ զազան,
Ու դարեր անվերջ, նա չի՝ ամաչում
Անանուն իրեն գերմարդ սրբազան։

Երդւում եմ կեանքով ներկայ մարդկութեան,
Որ նա է միակ սողոմն աշխարհի,
Նրա որոնած ճանապարհի փրկութեան
Հացն արտասուաթոր անտէր խոնարհի...

Արգար Պայազատ

*) Այս բանը պէտք է մեզանից իւրաքանչիւրս գրի տանի, անդիր սովորի, և առաւօտից երեկոյ եօթն անգամ եօթ նուագ կրկնի։

Դաս. Կալատուզով

ԱՐՄԵՆԻԱՆ

ეროვნული
ბიბლიოთეკა

ՊԱՏԿԵՐ

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԳԵՂԱՐԻԵՍՏԸ ՀՆԱԳՈՅՆ ՆԱԽԻՋԵՒԱՆՈՒՄ

39 Նոյեմբերի

Տեղիս ծխական դպրոցի դաստաւութիւնը վերսկսելուն պէս, ուսուցչական խումբը, ժամանակութեամբ տեղական սիրողների, ծրագրեցին տալ մի ներկայացում յօգուտ նոյն դպրոցի։ Այն օրից սկսած, համարեա ամեն օր տեղի էին ունենում ժողովներ, ջոկում էին պիէսաներ, բայց դպրոցի գրադարանում չկային յարմար պիէսաներ— եղածներն էլ անդրջրհեղեան էին։ Վերջապէս, չգիտեմ որտեղից ճարեցին Շիրւանզադէի 3 գործողութեամբ «Եւգինէ» դրաման և Աւետեանի թարգմանած «Պաշտօնս է խոմփալ» 1 գործողութեամբ վոդեւիլը։ Շարունակեցին դարձեալ նոյն ժողովները, այս անգամ արդէն փորձեր անելու համար, բայց այս դէպքումն էլ գործը կրիայի քայլով առաջ գնաց, որովհետև սիրողների մեծամասնութիւնը միշտ բացակայում էր. ներկայ եղողներն էլ խօսում էին մի քիչ դէսից-դէնից, ապա մի երկու ֆունտ կանֆէտ և ֆիստաշկա անուշ անելուց յետոյ, բաժանւում էին միւս օրը հաւաքւելու համար։ Յուսահատած սիրողները վերջը ուզում էին հրաժարւել ներկայացում տալու մտքից, բայց մի անսպասելի դէպքից յետոյ, այդ բանը տեղի չունեցաւ։ Ահա թէ ինչու. տեղս եկան բալագանների մի խումբ, ապա պրոժեկտոր-սինեմատոգրաֆ և տեղիս ազգաբնակութիւնը հայ և թուրք, շտապեցին ներկայ գտնւել սրանց ներկայացումներին. այս յաջողութիւնը տեսնելով, ծխական դպրոցի ուսուցիչների բերանի ջուրը գնաց և սրանք վճռեցին, ինչ էլ որ լինի, ամսիս 27-ին տան մի ներկայացում և ներկայացրին վերոյիշեալ «Եւգինէն»և«Պաշտօնս է խոմփալ»-ը։ «Եւգինէ»-ի մէջ—գլխաւոր դերակատար Միհրան Ալվերդեանը, իր շարժուածքով նման էր «Պաշտօնս է խոմփալ»-ի մէջ եղած զինուորին, գրիմով նման էր գործակատարի և երբոր սա յուզւած կանչում էր՝ Եւգինէ, կարծես հրդեհ է ծագել, և Եւգինէին օգնութեան է կանչում։ Եւգինէն (օր. Լիզա Մելիք-Թանդեան) չը-բախտաւորեցրեց հանդիսականներին իր դէմքը ցոյց տալով. նայում էր միշտ բեմի խորքը. խօսում էր շատ սառը, ինչպէս թաղա սառոյց և անտարբեր էր, որպէս պառաւ օրիորդ կամ տատս։ Արգար Սուլթանեան (Լեւոն Պետրոսեան) բեմ դուրս եկաւ և անյայտացաւ, բայց երբ խօսել սկսեց նոր իմացանք, որ ամօթից դերակատարների հետեւում թաղնւել էր. Անանեայ Տէր Գրիգորեանը, որ թիւրիմացութեամբ վերցրել էր Համազասպ Վարսամեանի դերը և ոչ թէ Միհրանի, շատ աջող տարաւ իր դերը։ Այս պիէսայում ճեացածները մի կերպ էշը ցեխից հանեցին։ «Պաշտօնս է խոմփալ»-ի մէջ Սարգիս Արգարեան—կապիտանի դերում իր գրիմով նման էր արարանցի չարաղաբի։ Լաւ տարան իրենց դերերը պ. Բունեաթեան՝ զինուոր, և տ. Բունեաթեան՝ կապիտանի կինը։ Մի բան ես չենք կարող չնկատել, ամբողջ ներկայացման ժամանակ հանդիսականներից շատերը ծխում էին, ուստի խորհուրդ կըտանք դերակատարներին, որ եթէ այսուհետև ներկայացում կըտան, թող դահլիճի առաստաղից մի հերթիկ բաց անեն, ծուխը դուրս գնալու համար։ Մոռացանք յիշել, որ տոմսակ վերցնողները տեղ չգտնելով նստելու ճեացել էին կանգնած, իսկ տոմսակ չվերցնողները բազմել էին առաջին շարքերում։ Մուտքը եղաւ 100 ր. ծախսը 20 ր.։

Փիսոն Կապսիլիչ Ճլթեանց

ԻՆՁ ՄԻ ՄՕՏԵՆԸՑ...

Ինձ մի մ'օտենայ այրող յուշերով,
Վատ երազանքի տագնապների մէջ,
Ոչ կոյր հեշտանքի տանջող զիշերով,
Եւ ոչ անիմաստ տեսութեամբ անվերջ։

Դու մի շտապիր իմ գրկում մարել
Թունալից հոգուդ ախտերը այրող,
Ոչ լալ, ոչ խնդալ եւ ոչ համոզել,
Ոչնչով դու ինձ կեանք տալ չես կարող։

Քո հէքիաթներիդ կարօտ չէ հոգիս,
Որին խեղճ մարդիկ Սէր են անուանում,
Դու չես զիջանիլ վատ պատրանքներիս,
Իսկ լոկ մարմնով ես չեմ հիանում։

Խ՝ ԷՐ

ԴԷԱԻՑ-ԴԷՆԻՑ

Ատամնաբոյժի մօտ

—Խնդրեմ չվախենաք, մեզ մօտ շատ հեշտ է ատամ հանելը... մեքենայով և առանց ցաւ պատճառելու։

—Բայց...

—Այժմ խնդրում եմ չխօսէք։ Այ այսպէս պահեցէք բերանդ...

—Պարոն բժիշկ...

—Ցեռոյ, յետոյ... միք խանգարիլ... արդէն... այժմ լուացէք բերաններդ։ Գեղեցիկ... դէհ այժմ ասացէք, ինչ որ ուզում էիք ասել...

—Ես պարոն բժիշկ ուզում էի ասել, որ դուք ցաւող ատամի տեղ առողջ ատամըս հանեցիք։

—

Մի հարուստ վաճառական, պատրաստւում է արտասահման գնալու, ճանապարհւելուց առաջ նա նստած իր տանը, ընտանիքի շուրջը, ամենքից էլ հարցնում էր, թէ ո՞վ ինչ է ցանկանում որ Փարիզից բերէ։ Ընտանիքի ամեն մի անդամ յայտնում է իր ցանկացած առարկայի անունը. որը ջութակ է պատւիրում, որը հագուստ և այլն։ Վերջապէս հերթը հասնում է ամենափոքր—հօթը տարեկան որդուն...

—Է՜հ, չարաճճի Ռուբիկ, դեղ համար ինչ կըցանկանաս, որ բերեմ։

—Հայրիկ, ինձ համար բեր մի ռուսական նկարչական մեքենա։

—Իսկ ինչիդ է հարկաւոր այդ մեքենան։

—Ես կամենում եմ մայրիկին նկարել երբ նա համբուրում է մեր ծանօթ պարոն Սուրէնի հետ։

—

—Ա՜, բարեւ, բարեւ... Ռուբէն... այդ ե՞րբ ես եկել Բագից...

—Այսօր...

—Նու, ինչ նորութիւն կայ Բագու... հա Սուրէնին տեսար...

—Այո տեսայ...

—Հը ինչպիսի դրութեան մէջ է՞... լաւ է ապրում, հը՞...

—Չէ բարեկամ, շատ վատ է ապրում, և շատ խղճալի դրութեան մէջ է...

—Ինչպէ՞ս...

—Խեղճ տղային որ պատահեցայ, հագին մինչև անգամ մի շապիկ չունէր։

—Ի՞նչ էք ասում... ինչպէս... այդ որտեղ տեսաք նրան...

—Հ՜մ... կարծեմ ես նրան ծովի մէջ տեսայ, լողանալիս...

—Ահա... հասկացայ...

—

ԵՐԿԱԹՈՒՂՈՒՄ

Կանդուկտ.—Է՛յ պարոն այստեղ չի կարելի ծխել...

Ճանապ.—Եւ ես չեմ ծխում...

Կանդուկտ.—Ի՞նչպէս չէք ծխում, քանի որ ծխախոտը բերանումդ է...

Ճանապ.—Է՛, դրանով ինչ էք ուզում ասել. այ տեսէք... իմ կօշիկները հագիս է բայց ես չեմ շրջում, այնպէս էլ ծխախոտը թէև բերանումս է, նա վառւած չէ և չեմ ծխում...

Խորէն-ժան-դը-բիւլ

Ուսուցիչը շոգեկառքի շոգիով գնալու մասին 2 ժամ բացատրելուց յետոյ կըհարցնէ.—Տղայք հասկացա՞ք ասածներս։

Աշակերտները—*Այո պարոն, ամեն բան հասկացանք, միայն շոգեկառքի առանց ձիերի ինչպէս գնալը չհասկացանք։*

—

Մարդը—*Ամեն բան նախ փոքրերից կըսկսի, այնպէս չէ՞ Վարդուհի։*

Տիկը—*Այո այդպէս է, բայց ինչու ես հարցնում։*

Մարդը—*Ի՞նչ իմանամ. երբ քեզ հետ նշանուեցանք, առաջին անգամ մայրիդ համար սանր ուղեցիր, այդ էր միակ փափագդ ու պակասդ. իսկ հիմա եթէ ամբողջ բազարը բերեն տան պակասդ չի լրանայ։*

—

—*Սաթենիկ, բաւական է լաս, մեղք ես, երեք օր է ամուսնդ մեռել է, և դու անդադրում լալիս ես։*

—*Ախր ինչպէս չլամ, ողորմած հոգին եթէ մեռնելու էր, թող վեց ամիս առաջ մեռնէր, որ Ստեփանեանը ձեռքիցս չգնար, նա էլ ամուսնացաւ, հիմի ես ում վրայ պակասեմ։ Բան չլամ ինչ անեմ...*

Միսս չի

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

МАГАЗИНЪ
Композиця
Тифлисъ. Пушкинскіи пассажъ № 8
ГРОМАДНАЯ ЭКОНОМІЯ
шведскаго композиціон. бѣлья.
Носитсяъне менѣе двухъ лѣтъ
Постоянный большой выборъ свѣжаго товара.
Воротниковъ, манишекъ и манжетъ.
по фабричнымъ цѣнамъ.
Передѣлка въ любой фасонъ безплатно

Продаются портняжныя принадлежности, какъ-то пугоицы, подкладки, мѣлъ и впрочѣе.
Имѣется таоте галантерейный Отдѣлъ
00—26 М. А. КАЛТАКЯНЦЪ

ԻՒԱՆ ՁԱՔ. ՏԷՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆԻ
ԱՌԵԱՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ
ԱՐՏՕՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ.
ՀԱՅԻՊԱՀԱԿԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ
Խնդրագրերն ընդունուում են մինչև յունուարի 15-ը. Բաղեմեան փողոց, № 19. Վորոնցովի արձանի դիմաց.
3—1

Ցանանկալով մեր բոլոր բաժանորդներին ամենայն տեսակ բարիք, մենք խորհուրդ ենք տալիս բաժանորդագրուել և ամենօրեայ հայերէն ամենամեծ ու օգտակար

III ՏԱՐԻ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ III ՏԱՐԻ

Գրական, քաղաքական, հասարակական և առևտրա-արդիւնաբերական լրագրին, որ դեկտեմբերի 1-ից հրատարակուում է ամեն օր, այն ուղղութեամբ և այն ծրագրով, որ ունեցել է սկզբնաւորութեան օրից և որը գոհունակութիւն է պատճառել ընտիր և բանիմաց հասարակութեանը։

«ՍՈՒՐՀԱՆԴԱԿԻ» տարեկան բաժնեգինն է 10 ր., կէս տարուանը 6 ր. Սակայն «ԽԱԹԱԲԱԼԱ»-ի բաժանորդների համար պատրաստ ենք զիջել և տալ հետևեալ գներով.

„ՍՈՒՐՀԱՆԴԱԿ“ ԵՒ „ԽԱԹԱԲԱԼԱ“ ՄԻԱՍԻՆ

Տարեկան . . .	12 ր.	Երեք ամիսը . .	4 ր. — կ.
Կէս տարին . . .	7 ր.	Ամիսը . . .	1 ր. 50 կ.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Сурандакъ“,
Հեռագրով՝ Тифлисъ, „Сурандакъ“

ԿԱԹՆԱՏՈՒՆ ԵՒ ՄՐՃԱՐԱՆ
ՁԻԹՑԱՐԻԱ
Գոլովինսկի պրոսպէկտի և Գիորգևսկի փողոցի անկիւնում.
ՕՐԻՆԵՏ ՀԻՒՐԱՆՈՑԻ ՏԱԿ, ՔԱՇԻԼԻԹԻ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԻՄԱՑ.
Ամենաթարմ ու մաքուր կաթ, մածուն, շոկոլադ, կակաո
Իսկական տաճկական սուրճ
ԹԷՅ ԲԱՐՁՐ ՅԱՏԿՈՒԹԵԱՄԲ
Մատակարարում են իմ անմիջական հսկողութեամբ պարտաճանաչ և մաքուր պահած ծառայողներ, մեր կաթնատուն-սրճատուն յաճախող մեծարելի հասարակութեան։
ԳՆԵՐԸ ՄԱՏՉԵԼԻ ԵՒ ՉԱՓԱՒՈՐ
Խնդրում ենք անձամբ համոզուէք մեր ասածների ճշմարտութեան և մեր սրճատան-կաթնատան բիւրեղանման մաքրութեան համար։
Ցարգանոֆ Տրապիզոնցի Ցարութիւն Պետրոսի Պետրոսեան
(ա. օր) 25—16

ԲՈԼՈՐ ՏԵՍԱԿ ԱՊՐԱՆՔՆԵՐԸ ԳՆՈՒՄ ԵՆՔ ԱՆՄԻՋԱՊԷՍ
ԱՐՑԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԵՒ ՌՈՒՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻՑ
„Օ-ԲՈՆ ՄԱՐՇԷ“
Գալանտերէյնի ապրանքների մագազին
Գոլովինսկի պրոսպեկտ, Աբրուցի բաղնիքի դիմաց, տուն ԱՆԱՆԵԱՆԻ
Որպէսզի վերջին նորութիւնների սիրահար պատուելի հասարակութիւնը
ՀԱՄՈԶՈՒՒ
որ մեր մագազինում ապրանքները անհամեմատ ԱՐԺԱՆ են և աւելի ԴԻՄԱՑԿՈՒՆ գնահատելի
քան մի ուրիշ տեղ
ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ԱՆՁԱՄԲ ՀԱՃԷՔ ԱՑՑԵԼԵԼ ԵՒ ՍԵՓԱԿԱՆ ԱՉՔՈՎ ՑԵՄՆԵԼ
25—13 ԱՊՐԱՆՔԸ ԱՐԺԱՆ, ԳՆԵՐԸ ՎԵՐՋՆԱԿԱՆ (ե.հ.շ.

ՀՈՒՅՍ ԵՄ ՏԱԼԻՍ ԳՐԱՎԱՃԱՌՈՎ

Խմբագիր-հրատարակող. ԱՍՏ. ԵՐԻՑԵԱՆ Электропечатня Т-ва „Культура“, Вельяминовская, 18.

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Ինչպես ի սկզբանե ստեղծեցին Աստուծոյ հրեշտակները։

Ինչպես դեռ մարդ չկար, երկրի վրայ միայն Լեշոն և պշեռնոյները։

Ինչպես Լեշոն ստեղծեց Ադամ և Եվան։

Ինչպես Լեշոն մեղանչեց Աստուծոյ դեմ։

Ինչպես Լեշոն ուզեցավ Աստուծոյ գահը գրաւել։

Ինչպես Լեշոն ուզեցավ Աստուծոյ հետ բռնամարտել։

ეროვნული ბიბლიოთეკა